Հավելված N 12

ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

(հարկիրճ շարադրանք)[1]

1. ՈԼՈՐՏԸ

2. Արտաքին գործերի նախարարությունը մշակում և իրականացնում է արտաքին գործերի, դիվանագիտական ծառայության, միջազգային հարաբերություններում Հայաստանի Հանրապետության տեսակետների ներկայացման և հետաքրքրությունների առաջմղման, օտարերկրյա պետությունների հետ դիվանագիտական և հյուպատոսական հարաբերությունների իրականացման՝ այդ թվում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության, օտարերկրյա պետություններում, միջազգային կազմակերպություններում ներգրավման միջոցով ՀՀ առաջնահերթությունների սպասարկման, Հայաստանի Հանրապետության միջազգային իրավապայմանագրային հարաբերությունների, Հայաստանի Հանրապետության պետական արարողակարգային միջոցառումների ապահովման, պետական մարմիններին իրենց գործունեության համար արտաքին քաղաքականության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովման և վերապատրաստման ոլորտներում Կառավարության քաղաքականությունը:

3. ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

4. ՀՀ արտաքին քաղաքականությունն ուղղված է ՀՀ ինքնիշխանության ու պետական շահերի պաշտպանությանը, ՀՀ շուրջ անվտանգային միջավայրի ձևավորմանը, տարածաշրջանային խաղաղության և կայունության հաստատմանը, գործընկերների հետ համագործակցության խթանմանը և հարաբերությունների կարգավորմանը, երկկողմ և բազմակողմ միջազգային հարթակներում գործունեության ծավալմանը, օտարերկրյա պետություններում ՀՀ քաղաքացիների և իրավաբանական անձանց շահերի պաշտպանության ապահովմանը, միջազգային և տարածաշրջանային գործընթացներին

[1] Ոլորտային քաղաքականության ողջ համառոտ շարադրանքը չպետք է գերազանցի 6 էջի սահմանները:

Հայաստանի ներգրավվածության ավելացմանը, միջազգային կազմակերպություններում արտաքին քաղաքական, անվտանգային, սոցիալ-տնտեսական, մշակութային և այլ ոլորտներին առնչվող ՀՀ հետաքրքրությունների առաջմղմանը: Տվյալ թիրախները արտացոլում են 2021-2026թթ. «Հայաստանի Հանրապետության Կառավարության Ծրագրի» 1.2.1 և 1.2.2 կետերում նշված դրույթները:

5. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ արտաքին գործերի նախարարության ոլորտային ծախսային ծրագրերն են (ըստ գերակայությունների).

ԾՐԱԳԻՐ 1061 - Արտաքին գործերի ոլորտում կառավարության քաղաքականության մշակում և իրականացում

Ծրագրի շրջանակում ՀՀ արտաքին գործերի նախարարությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության և պետական շահերի պաշտպանություն:

<u>Ծրագիր 1128</u>

Օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների գործունեության կազմակերպում և իրականացում

Ծրագրի շրջանակում ՀՀ արտաքին գործերի նախարարությունն իրականացնում է միջազգային ասպարեզում ՀՀ շահերի պաշտպանություն և դիրքորոշումների առաջ մղում:

<u>Ծրագիր 1118</u>

Համագործակցություն միջազգային կազմակերպությունների հետ

Ծրագրի շրջանակում ԱԳՆ իրականացնում է միջազգային կազմակերպություններում ներգրավման միջոցով ՀՀ առաջնահերթությունների սպասարկում:

<u>Ծրագիր 1050</u>

Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ոլորտում մասնագետների պատրաստում և վերապատրաստում

Ծրագրի շրջանակում ՀՀ արտաքին գործերի նախարարությունն իրականացնում է պետական կառավարման համակարգում արտաքին հարաբերությունների իրականացման արդյունավետության բարձրացում:

Ծրագիր 1178

Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում արարողակարգային միջոցառումների իրականացում

Ծրագրի շրջանակում ԱԳՆ պետական արարողակարգի ծառայությունը իրականացնում է արարողակարգային միջոցառումների պատշաճ կազմակերպում:

6. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Ներկայացնում ենք ՀՀ արտաքին գործերի նախարարության յուրաքանչյուր տարվա համար նախատեսված գումարները.

2026 թվականի համար՝ 21,327,543.5 հազար դրամ

Ծրագիր 1061 – 4,056,898.7 հազար դրամ
Ծրագիր 1128 – 14,545,910.5 հազար դրամ
Ծրագիր 1118 – 2,103,286.2 հազար դրամ
Ծրագիր 1050 – 301,467.6 հազար դրամ
Ծրագիր 1178 – 319,980.5 հազար դրամ

2027 թվականի համար՝ 21,097,443.0 հազ. դրամ

Ծրագիր 1061 – 3,668,118.6 հազար դրամ
Ծրագիր 1128 – 14,703,727.0 հազար դրամ
Ծրագիր 1118 – 2,103,286.2 հազար դրամ
Ծրագիր 1050 – 301,467.6 հազար դրամ
Ծրագիր 1178 – 320,843.6 հազար դրամ

2028 թվականի համար՝ 21,446,783.7 հազար դրամ

Ծրագիր 1061 – 3,818,686.8 հազար դրամ
Ծրագիր 1128 – 14,902,267.8 հազար դրամ
Ծրագիր 1118 – 2,103,286.2 հազար դրամ
Ծրագիր 1050 – 301,467.4 հազար դրամ
Ծրագիր 1178 – 321,075.3 հազար դրամ: